Դեղատոմսով բաց թողնվող դեղերի «Medicare»-ի պլանի ծախսերի հետ կապված հավելյալ օգնություն ստանալու համար ձեր իրավասության վերանայում. որոշ բաներ, որոնք դուք պետք է իմանաք

2007թ.

Եթե դուք ստանում եք հավելյալ օգնություն կապված դեղատոմսով բաց թողնվող դեղերի «Medicare»-ի պլանի ծախսերի հետ, ապա Սոցիալական ապահովությունը կարող է կապվել ձեզ հետ՝ ձեր կարգավիճակը վերանայելու հարցով: Սույն վերանայումը կերաշխավորի, որպեսզի դուք պահպանեք ձեր իրավասությունը հավելյալ օգնություն ստանալու համար և ստանաք ձեզ հասանելիք բոլոր նպաստները: Եթե դուք չեք ընտրվում վերանայման համար, ապա ձեր կողմից ստացվող հավելյալ օգնության չափը փոփոխություն չի կրելու:

Ե՞րբ է Սոցիալական ապահովությունը իրականացնելու այս վերանայումը

Վերանայումները սովորաբար իրականացվելու են օգոստոսի վերջին:

Ինչպե՞ս է Սոցիալական ապահովությունը դիմելու ինձ

Մենք ձեզ ուղարկելու ենք «*Սոցիալական ապահովության վարչության կողմից հավելյալ օգնություն ստանալու ձեր իրավասության վերանայումը*» կոչվող լրացման ենթակա ձևաթուղթը: Հավելյալ օգնության բոլոր անհրաժեշտ ճշգրտումները ուժի մեջ են մտնելու հաջորդ տարվա հունվարին: Օրինակ, եթե մենք վերանայման ձևաթուղթը ձեզ ուղարկենք 2007թ.-ի օգոստոսին և դուք 30 օրվա ընթացքում վերադարձնեք վերանայման ձևաթուղթը, ապա ձեր հավելյալ օգնության մեջ անհրաժեշտ ճշգրտումները ուժի մեջ են մտնելու 2008թ.-ի հունվարին:

Ի՞նչ եթե ես ձևաթուղթը լրացնելու հարցում ունենամ օգնության կարիք:

Ձևաթուղթը լրացնելու հարցում ձեզ կարող են օգնել ընտանիքի անդամները, խնամողները և երրորդ անձինք: Սոցիալական ապահովությունը նույնպես կարող է պատասխանել ձեր հնարավոր հարցերին: Պարզապես զանգահարե՛ք մեզ՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով: Եթե դուք խուլ եք կամ ունեք լսողության խնդիր, ապա խնդրում ենք զանգահարել մեր TTY հեռախոսահամարով՝ **1-800-325-0778**: Օգնություն ստանալու համար դուք նաև կարող ենք այցելել Սոցիալական ապահովության գրասենյակ:

Ի՞նչ կարգի ճշգրտում է կատարվելու իմ հավելյալ օգնության մեջ:

Տեղի է ունենալու ստորև նշվածներից մեկը.

- Ձեր կողմից ստացվող հավելյալ օգնության գումարի ոչ մի փոփոխություն.
- Ձեր կողմից ստացվող հավելյալ օգնության գումարի բարձրացում.
- Ձեր կողմից ստացվող հավելյալ օգնության գումարի նվազեցում կամ
- Ձեր հավելյալ օգնության դադարեցում:

Ի՞նչ է տեղի ունենալու, եթե ես չվերադարձնեմ վերանայման ձևաթուղթը:

Ձեր հավելյալ օգնությունը դադարեցվելու է հաջորդ տարվա հունվարին:

Ես ինչպե՞ս եմ տեղեկանալու վերանայման վերաբերյալ Սոցիալական ապահովության կողմից ընդունված որոշման մասին:

Սոցիալական ապահովությունը ձեզ կուղարկի նամակ, բացատրելով ընդունված որոշումը: Եթե դուք կարծեք, որ որոշումը ճիշտ չէ, ապա դուք իրավունք կունենաք այն բողոքարկելու համար: Նամակում բացատրվելու են նաև ձեր բողոքարկման իրավունքները:

Ես ինչպե՞ս կարող եմ ստանալ լրացուցիչ տեղեկատվություն:

Դեղատոմսով բաց թողնվող դեղերի «Medicare»-ի պլանի հետ կապված ծախսերի վերաբերյալ հավելյալ օգնության մասին տեղեկատվության կամ Սոցիալական ապահովության մասին ընդհանուր տեղեկատվության համար զանգահարե՛ք մեզ՝ **1-800-772-1213** (TTY **1-800-325-0778**) հեռախոսահամարով կամ այցելե՛ք մեր վեբ կայքը՝ ***www.socialsecurity.gov***: Եթե դուք զանգահարում եք, քանի որ ունեք հարցեր ձեր կողմից ստացված նամակի մասին, ապա խնդրվում է ձեզ մոտ ունենալ նամակը: Այն կօգնի մեզ պատասխանելու ձեր հարցերին:

Դեղատոմսով բաց թողնվող դեղերի «Medicare»-ի պլանների և ընդգրկման հատուկ ժամանակամիջոցների մասին տեղեկատվություն ստանալու համար զանգահարե՛ք՝ **1-800-MEDICARE** (**1-800-633-4227**; TTY **1-877-486-2048**) հեռախոսահամարներով կամ այցելե՛ք՝ ***www.medicare.gov***:

Social Security Administration
SSA Publication No. 05-10111-AM
Review Of Your Eligibility For Extra HelpWith Medicare Prescription Drug Plan Costs: Some Things You Should Know (Armenian)
August 2007